



# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ԽՈՐՀՈՒՐԴ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

### ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ (ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՆՐԱՅԻՆ ՊԱՇՏՊԱՆԻ ԳՐԱՍԵՆՑԱԿԻ) ԽՆԴԻՐՆԵՐԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով փաստաբանական համայնքի (այդ թվում՝ հանրային պաշտպանի գրասենյակի) խնդիրները,

նկատի ունենալով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության կողմից շրջանառության մեջ դրված «Փաստաբանության մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքների նախագծերով նախատեսվող փոփոխությունները, որոնք առնչվում են փաստաբանական համայնքի հետ,

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (այսուհետ՝ Պալատ) խորհուրդը,

## Պ Ա Ր Զ Ե Ց՝

Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության պաշտոնական կայքէջում 04.10.2013թ. շրջանառության մեջ է դրվել «Փաստաբանության մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքների նախագծեր, որոնցով նախատեսվում է ստեղծել փաստաբանների պետական գրանցամատյան և դրա վարումը վերապահել ՀՀ արդարադատության նախարարությանը և այդ գրանցամատյանը վարելու համար յուրաքանչյուր փաստաբանից տարեկան գանձել պետական տուրք՝ 60.000 (վաթսուն հազար) ՀՀ դրամի չափով:

Ընդ որում՝ որպես Նախագծերի ընդունման հիմնավորում նշվել է, որ օրենքի ընդունման անհրաժեշտությունը բխում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող բարձր տեխնոլոգիաների և տեղեկատվական համակարգերի կիրառմամբ էլեկտրոնային գրանցամատյանների ներդրման միջոցով ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և պետական և այլ մարմինների ու

կազմակերպությունների միջև տեղեկատվության արագ փոխանակման կապակցությամբ իրականացվող պետական քաղաքականությունից:

Փաստաբանների համար լրացուցիչ ֆինանսական պարտականություն նախատեսելուց և փաստաբանության անկախությունը սահմանափակելուց բացի, նախագիծը փաստաբանության համար անընդունելի կարգավորումներ է նախատեսում կապված հանրային պաշտպանի գրասենյակի հետ:

***Փաստաբանների պալատն իր մտահոգությունն է հայտնում Նախագծերի վերաբերյալ և պահանջում է այն հանել շրջանառությունից հետևյալ հիմնավորումներով.***

1. Նախագծերը չունեն պատշաճ հիմնավորում: Այս պահի դրությամբ փաստաբանների հաշվառումն իրականացնում է ՀՀ փաստաբանների պալատը: Ընդ որում, դա կատարում է **ԱՆՎՃԱՐ**: ՀՀ փաստաբանների պալատի կայքէջում տեղադրված է փաստաբանների ցանկը, ինչպես նաև յուրաքանչյուր փաստաբանի վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվությունը և չի ներկայացվել հիմնավորում այն մասին, որ ներկայումս կիրառվող հրապարակային հաշվառումը չի նպաստում կամ խոչընդոտում է պետական և այլ մարմինների ու կազմակերպությունների միջև տեղեկատվության ազատ փոխանակման կապակցությամբ իրականացվող պետական քաղաքականությանը: Եթե նախագծի նպատակը Նախարարության տեղեկատվական բազայում ՀՀ փաստաբանների տվյալների ապահովումն է, ապա կարելի է ուղղակի հղում կատարել ՀՀ փաստաբանների պալատի կայքէջին կամ **օրենքով նախատեսել, որ ՀՀ փաստաբանների պալատը պարտավոր է որոշակի տեղեկություններ հավաքել փաստաբաններից և հրապարակել:** Նախարարությունը չի բերել որևէ փաստ այն մասին, որ ՀՀ փաստաբանների պալատի կողմից հաշվառում չի իրականացվում, կամ, որ իրականացվող հաշվառումը ազգաբնակչության մատուցվող ծառայությունների որակի վրա է ազդել:

Նախագծերից և դրա հիմնավորումներից պարզ չէ թե դրանով նախատեսված նորամուծությունը ի՞նչ ազդեցություն կարող է ունենալ փաստաբանների կողմից ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների որակի վրա: Պալատի խորհուրդը գտնում է, որ գրանցամատյանը և փաստաբանի կողմից մատուցվող ծառայությունների որակը որևէ կապ չունեն միմյանց հետ:

2. Նախարարությունը չի հիմնավորել, թե ինչու պետք է փաստաբանից գանձվի տուրքը ՏԱՐԵԿԱՆ կարգով, այն դեպքում, երբ Նախարարությունը իրավաբանական անձանց գրանցամատյանները վարելու համար տարեկան պետական տուրքեր չի գանձում:

Բացի այդ, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում պետական տուրքի հասկացությունը սահմանող 2-րդ հոդվածի համաձայն՝ *Հայաստանի Հանրապետությունում պետական տուրքը պետական մարմինների լիազորությունների իրականացմամբ պայմանավորված՝ սույն օրենքով սահմանված ծառայությունների կամ գործողությունների համար ֆիզիկական և իրավաբանական անձանցից Հայաստանի Հանրապետության պետական և (կամ) համայնքների բյուջեներ մուծվող օրենքով սահմանված պարտադիր վճար է:*

Նույն օրենքի 3-րդ հոդվածը սահմանում է, որ *Հայաստանի Հանրապետությունում պետական տուրք վճարողներ են համարվում սույն օրենքի 7*

*հողվածով նախատեսված ծառայություններից կամ գործողություններից օգտվող ֆիզիկական և իրավաբանական անձինք (այսուհետ՝ պետական տուրք վճարողներ):*

Հատկանշական է այն հանգամանքը, որ վերոնշյալ իրավական նորմերի բովանդակությունից էլնելով պետական տուրքը պետք է վճարեն համապատասխան ծառայությունից կամ գործողությունից օգտվող սուբյեկտները (ֆիզիկական և իրավաբանական անձինք):

Նախագծի իմաստով փաստաբանի գրանցամատյանի շահառուներ են հանդիսանում հասարակությունը և պետական մարմինները, քանի որ նման համակարգի ներդրման անհրաժեշտությունը պայմանավորված է ազգաբնակչությանը մատուցվող ծառայությունների որակի բարձրացման և պետական և այլ մարմինների ու կազմակերպությունների միջև տեղեկատվության արագ փոխանակման կապակցությամբ իրականացվող պետական քաղաքականությունից<sup>1</sup>:

Տվյալ պայմաններում հարց է առաջանում, թե ինչու՞ փաստաբանը պետք է վճարի մի «ծառայության» համար, որի շահառուն (որից օգտվողը) ինքը չի հանդիսանում:

3. Նախագծերից պարզ չէ, թե ի՞նչ սկզբունքով է գրանցամատյանը վարելու համար սահմանվել 60.000 ՀՀ դրամ գումարը, հայտնի չէ թե ի՞նչ հաշվարկ է դրա հիմքում ընկած:

4. Նախագծի հիմնավորումների «ընթացիկ իրավիճակը և խնդիրները» կետում նշվում է, որ *օրենքի նախագծում նախատեսվող փաստաբաններից գանձման ենթակա պետական տուրքի գումարները նախատեսվում է ուղղել հանրային պաշտպանի գրասենյակի պահպանման, փաստաբանների պետական գրանցամատյանի տեխնիկական սպասարկման և շահագործման ծախսերի համար:*

Նախարարությունը չի հիմնավորել, թե ինչու պետք է այդ գումարն ուղղվի նաև հանրային պաշտպանի գրասենյակի պահպանմանը, ինչու պետք է փաստաբանը վճարի մի գործառույթի համար, որն ուղղակիորեն մտնում է պետության պարտականությունների մեջ:

ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ *յուրաքանչյուր ոք ունի իրավաբանական օգնություն ստանալու իրավունք: Օրենքով նախատեսված դեպքերում իրավաբանական օգնությունը ցույց է տրվում պետական միջոցների հաշվին:*

5. Գործող օրենսդրության համաձայն հանրային պաշտպանությունն իրականացվում է ոչ միայն քրեական գործերով: «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 41-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանել է քաղաքացիական, վարչական և սահմանադրական գործերով անվճար իրավաբանական օգնություն ստացող անձանց (խմբերի) ցանկը: 2014թ. հունվարի 1-ից հետո երեք խումբ քաղաքացիներ նույնպես հնարավորություն են ստանալու օգտվել անվճար իրավաբանական օգնությունից, որն անհամեմատ ծանրաբեռնելու է հանրային պաշտպանի գրասենյակը: Այս պայմաններում, ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի առաջին մասի պահանջի կատարումը կարող է ձախողվել, իսկ չձախողելու համար փաստաբանների վրա վճարումներ կատարելու պարտականություն դնելը որևէ արդարացում և իրավական հիմք չունի և նմանվում է կրկնակի հարկման:

<sup>1</sup> Տես՝ Նախագծերի հիմնավորման «իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը» կետը <http://moj.am/legal/view/article/528>

6. Նախարարությունը հաշվի չի առել նաև փաստաբանների սոցիալական վիճակը և Նախագծերի հիմնավորման մեջ այդ մասով որևէ վերլուծություն առկա չէ:

7. **Նախարարության այս նախաձեռնությունն ուղղակիորեն վտանգում է փաստաբանության անկախությունը:** «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի առաջին մասի համաձայն՝ **փաստաբանությունը փաստաբանների մասնագիտական միավորում է, որը հանդիսանալով քաղաքացիական հասարակության ինստիտուտ, չի մտնում պետական և տեղական ինքնակառավարման մարմինների համակարգի մեջ, իսկ երկրորդ մասի համաձայն՝ փաստաբանությունը գործում է անկախության, օրինապահության, ինքնակառավարման և փաստաբանների իրավահավասարության սկզբունքների հիման վրա: Պետությունը չի կարող իր խնդիրները դնել քաղաքացիական հասարակության ինստիտուտ հանդիսացող փաստաբանների մասնագիտական միավորման վրա:**

8. «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 41-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն անվճար իրավաբանական օգնության տրամադրումն իրականացվում է հանրային պաշտպանության միջոցով:

Ներկայումս նախատեսված են հանրային պաշտպանների 50 հաստիք: Սակայն Պալատի տեղեկություններով միտում կա հանրային պաշտպանների հաստիքների քանակը նվազեցնել 32 հաստիքի:

Հայաստանի Հանրապետության Նախագահի 21.04.2009թ. թիվ ՆԿ-59-Ն կարգադրությամբ հաստատված «Դատաիրավական բարեփոխումների 2009-2011 փվականների ռազմավարական գործողությունների ծրագրից բխող միջոցառումների» ցանկի 3.10 կետի համաձայն նախատեսվել է հանրային պաշտպանների հաստքային թվաքանակը հասցնել առնվազն 75-ի, որի կատարման վերջնաժամկետ է սահմանվել 2010թ. մարտի 3-րդ տասնօրյակը, իսկ որպես պատասխանատու մարմին է նշվել ՀՀ արդարադատության նախարարությունը: Նշված հանգամանքը հաշվի առնելով կարելի է արձանագրել, որ ոչ միայն չեն ապահովվել Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրության իրականացումը և մինչ օրս հանրային պաշտպանների հաստիքների քանակը չի ավելացել, այլև ներկայումս միջոցներ են ձեռնարկվում այդ հաստիքների նվազեցման ուղղությամբ, ինչը փաստաբանների համար ընդունելի չէ:

Այս պայմաններում, ՀՀ Սահմանադրության 20-րդ հոդվածի առաջին մասի պահանջի կատարումը կարող է ձախողվել, իսկ չձախողելու համար փաստաբանների վրա վճարումներ կատարելու պարտականություն դնելը որևէ արդարացում և իրավական հիմք չունի և նմանվում է կրկնակի հարկման:

Փաստաբանների պալատը վերոնշյալ փաստարկներով առարկում է Նախագծերի ընդունման դեմ և պահանջում է այն հանել շրջանառությունից:

Փաստաբանների պալատը Հայաստանի Հանրապետությունում գործադիր իշխանություն իրականացնող և օրենսդրական նախաձեռնության իրավունքով օժտված մարմին հանդիսացող Հայաստանի Հանրապետության կառավարությանը, ի դեմս Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության համարում է իր գործընկերն ու աջակիցը, քանի որ անժխտելի է տարբեր ժամանակներում արդարադատության նախարարության աջակցությունը փաստաբանական համայնքին:

Հաշվի առնելով վերոնշյալ փաստարկները,

ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով,  
Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհուրդը՝

### Ո Ր Ո Շ Ե Ց՝

*- Հայաստանի Հանրապետության վարչապետ պարոն Տիգրան Մարգարյանին առաջարկել հանդիպել Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի անդամների հետ՝ Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից շրջանառության մեջ դրված ««Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և ««Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծերի քննարկման կապակցությամբ:*

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նախագահ՝

Արա Զոհրաբյան

09 հոկտեմբեր 2013թ.  
թիվ 25/5-Լ,  
Երևան